— Պատահում է, երբ աղքատ են լինում եւ ուտելու ոչինչ չեն ունենում: Շատ անգամ ես հիւանդներ եմ ունենում, նրանց խնամք է հարկաւոր, հանգստութիւն է հարկաւոր, մինչեւ տեղ հասցնեմ, այսպիսիների համար իմ վրանը միշտ պատրաստ է:

Ընթրիքից յետոյ Ասլանը հարցրեց.

— Ինչպէ՞ս են ճանապարհները:

— Ճանապարհները միշտ վատ են, — ասաց նա, — ե՞րբ է եղել մի ժամանակ, որ ճանապարհները լաւ լինէին: Ահա հէնց այստեղ, ինչպէս տեսնում էք, բնակութիւններից շատ հեռու չենք: Անգղ գիւղը կէս ժամի ճանապարհով միայն հեռու է մեզանից, բայց դարձեալ ամենավտանգաւոր տեղերից մէկն է: Եթէ դուրս գաք, կը տեսնէք, որ ամէն մի ժայռի ետեւում, ամէն մի փոսի մէջ, ամէն մի թուփի տակ մի-մի աւազակ է թաքնուած: Մի քանի րոպէ առաջ բռնեցին մէկին, եւ ի՞նչ էք կարծում, կին էր, քրդի կին:

— Դա շատ հետաքրքիր է:

— Այդ անիրաւները աւելի վտանգաւոր են, քան թէ իրանց ամուսիններ. մութի մէջ, գետնի վրայից սողալով, մօտենում են քարաւանին, ինչպէս աղոէսը մօտենում է հաւաբունին, յետոյ սատանայի նման կուչ են գալիս մի հակի տակ, սուր դանակով կտրում են հակը եւ մէջի եղածը տանում են: Անկարելի է տեսնել նրանց:

— Իսկ դուք ի՞նչ արեցիք ձեր բռնած գողին, — հարցրի ես:

— Ի՞նչ պէտք է անէի, մազերից փոքր-ինչ ձիգ տոի, յետոյ բաց թողեցի:

— Իսկ եթէ տղամա՞րդ լինէր:

— Ուրիշ կերպ կը վարուէի:

— Չէ՞ք վախենում:

— Ինչի՞ց պէտք է վախենամ. նրանց մարմինը խօ երկաթից չէ, իմը՝ մսից. նրանք էլ ինձ նման մարդիկ են:

— Բայց գազան մարդիկ են:

— Վախլուկ գազաններ, հաւատացէք, շատ վախլուկ: Բոլորովին սխալ է, որ ասում են, թէ քուրդը քաջութիւն ունի: Նա քաջ է, երբ անզէն, անպաշտպան մարդկանց վրայ է յարձակւում: Իսկ երբ փոքր-ինչ ընդդիմադրութիւն է տեսնում, իսկոյն երեսը դարձնում է ու փախչում: Բոլոր վայրենիները այդպէս են. ես տեսել եմ նրանց, շատերի հետ գործ եմ ունեցել: Ի՞նչ քաջութիւն կարող է լինել բարբարոսի մէջ, որ առաջնորդւում է միայն յափշտակասիրութեան գաղափարով: